

17 Միայն շրջեր. եւ իբրեւ իջաներ ի շէսս, առնէր բժշկութիւնս բազում հիւանդաց. եւ էր սա աւուրբք ծերագոյն:

12 Բայց ամենայն մարդ սպասէր եւ ակն ունէր մահու նորա, վասն ըմբռնելոյ զմարմին նորա: 13 Իսկ սուրբն Շաղիտա իմացեալ զայս՝ թէ սպասեն առնուլ զմարմին նորա բազում մարդիկ, ապա խնդրեաց Շաղիտա յԱստուծոյ, զի մի՛ ոք ըմբռնեսցէ զմարմին նորա: 14 Եւ եղև ար մի յաւուրց, որպէս սովորութիւն էր իւր, գնալ ի վերայ ջուրցն գետոյն: 15 Եւ մինչ դեռ անցանէր նա ընդ գետն Կորդուաց, ըստ խնդրուածոցն իւրոց՝ որպէս եւ խնդրեաց նա, յանկարծակի՝ իբրեւ կայր ի մեջ գետոյն՝ յանկարծաւրէն ընդ ջրովն մտեալ սուրբն Շաղիտայն ծածկեցաւ: 16 Եւ մեծ գոյժ եղև զաւառին. եւ ժողովեցան անչափ բազմութիւնք մարդկանն ի մի վայր եկեալք կուտեցան, մինչեւ հատին դարձուցին ընդ այլ շրջեցին զգետն: 17 Եւ խնդրէին զմարմինն սրբոյն Շաղիտայի, եւ ոչ կարացին ուրեք գտանել. զի իւր խնդրուածքն առ Աստուած այսպէս էին լեալյառաջագոյն, սոյնպէս եւ կատարեցաւ:

ԳԼՈՒԽ ԻԷ.

1 Յաղագս սրբոյն Եպիփանու:

2 Այլ երանելին սուրբն Եպիփան էր ընդ՝¹ սրբոյն Շաղիտայի աշակերտ եղեալ մեծին Դանիէլի. եւ սա ի մանկութենէ սնեալ էր յանապատի: 3 Եւ յետ մահուանն մեծի քահանայապետին Ներսիսի եկն բնակեցաւ նա ի մեծ Ծոփս յանապատին, որ կոչի անուն տեղոյն Մամբրէ, ի վերայ գետոյն՝ որ անուանեալ կոչի Մամուլէղ: 4 Եւ էր բնակեալ ի քարանձաւս, եւ հանապազորդեալ էր ընդ զազանս անապատի, եւ ժողովէին առ նա արջք եւ ինձք: 5 Եւ էր սա հանապազորդեալ յանապատին, եւ առնէր սա մեծամեծ նշանս եւ սքանչելիս. եւ դարձուցանէր զբազում մոլորեալս ի հեթանոսութենէ ի քրիստոնէութիւն, եւ լնոր զերկիրն Ծոփաց վանիւք. եւ դնէր վարժեար ընդ ամենայն երկիրն Ծոփաց, եւ լինէր սուրբն Եպիփան լոյս երկրին Ծոփաց, եւ լուսաւորէր զնոսա մեծապէս:

6 Անցանէր եւ յերկիրն Աղձնեաց, լուսաւորէր եւ զնոսա, եւ լնոր զերկիրն Աղձնեաց վաներով. եւ շինէր վկայանոց մի յաւանին ի քաղաքին Տիգրանակերտի, եւ յար յիշատակի սրբոցն ի փրկութիւն եւ ի բարեխաւսութիւն աշխարհի. եւ առնէր ինքն նշանս, եւ դառնայր ինքն իւր վանսն: 7 Եւ էր մաւտ ի գետն Մամուլէղ արբեր մի, եւ ձուկն բազում ելանէր ընդ ակն արբերն. եւ բազում մարդիկ հանեալ զձուկն, աւգտէին ի նմանէ: 8 Ապա երկու եղբարք ի վերայ ձկանն հակառակեալք, Եսպան մինն զմինն. եւ իբրեւ գիտաց սուրբն Եպիփան, ասէ. Յայսմ հետէ այտի ոք ձուկն մի՛ կերիցէ: 9 Եւ անդէն դառնա-

1 Յերիս օրինակս չիք՝ ընդ. եւ ի միւսմ օրինակի՝ սուրբն Եպիփան ընգեր սրբոյն Շաղիտայի